

# ԱԶԱՏ ԽՕՍԻՔ

ՆԱԿԱՐԻ 29 ԴԵԿՏԵՄ. 1906. ԱՆԵՔՍԱՆԴՐԻԱ

ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐ, (1)



Անցած շաբաթ օր, գեղեցիկ 22ին, Աղատ  
Խօսք չհրատարակուեցաւ:

Ասիկա մին է այն իրողութիւններէն որոնց  
առջև ամէնէն ըմբոստ ու յամառ տրամասացնե-  
րըն անգամ հարկ կը տեսնեն խոնարհելու:

Եւ սակայն այդ բիրտ իրողութիւնը չկրնա-  
մեզ արգիլել բացատրութիւն մը տայէ, վերջակէս  
մ գնելու համար, բոլոր այն խառն շնկոցներու,  
լռակնարկութեանց, գաղտնախորհուրդ թաքնա-  
մտութեանց և ուրիշ այս կարգի ապրանքներու  
որով Ալեքսանդրիոյ հրապարակը ողողեցաւ ան-

(1) Այս ուղերձը կրնար ունենալ նաև իբր խորագիր «Հայեր» կամ «Ազնիի ԱԶԱՏ ԽՕՍԻՔԵԱՆՆԵՐ», բայց ոչ երբեք «ԲԱՂԱՔԱՑԻՔ» և կամ «ԱՐԲ ԱԹԵՆԱՅԻՔ» ինչ որ այստեղ բոլորովին անիմաստ է:

Մ Ն Ք. Խ մ ր.

յամ շարթու, Ազատ Խօսք չհրատարակուելուն առթիւ:

Նախ բոլորովին սխալ է այն դրոյցը թէ անհամաձայնութիւն մը ծագած է մեր խմբագրապետին և թերթիս աւագ աշխատակից Պանդի միջև և աակից առաջ եկած՝ անցած շարթուան ցաւալի իրողութիւնը: Եթէ Պանդ ժամանակէ մը ի վեր չերևար Ազատ Խօսքի մէջ, ատոր պատճառը պէտ է փնտռել այն եօթը Մահացու մեղքերէն միոյն մէջ որուն աստուածաբանները Յըլութիւն անունը կուտան եւ որ կը համարուի պատկառելի Մայր ամենայն Չարեաց: Պանդէն խնդրեցինք որ երկտողով մը ինքն ալ հերքէ այդ անհիմն դրոյցը: Խոստացաւ. սակայն մինչև թերթըս մամուլին յանձնուած պահուն սակաւին հազիւ երկտողին քառօրէր գրած էր: Երբ քանի մը շարթուէն աւարտի այդ երկտողը, այն ժամանակ չարախօսները անգամ մըն ալ իրենց արժանի պատիժը պիտի կրեն:

Սուտ է նաև թէ Ազատ Խօսքի բաժնետէտերը վերջին ընդհանուր ժողովին մէջ թերթին ընդհանուր ուղղութեան մասին մէկ քանի դիտողութիւններ եղած ըլլան, որոնցմէ վիրաւորուած ըլլայ խմբագրապետին դիւրագգայութիւնը: Ընդհակառակը, ատենագրութիւններն ի ձեռին, կրնանք ապացուցանել որ այդ ժողովի վերջին նստին մէջ, բաժնետէրերը, միաձայնութեամբ և

յոտնկայս, շնորհակալութիւն յայտնած են Ազատ Խօսքի խմբագրութեան և միենոյն ատեն պարսաւանաց քուէ տուած են պարտքերնին չվճարող բաժանորդներուն:

Քսու զրպարաութիւն մըն է նաև այն տարաձայնութիւնը թէ խմբագրութեանս արկղակալը ամբողջ գրամները իւրացուցած և Ամերիկա փախած է, մեզ նիւթական անյաղթելի դժուարութեանց մասնելով և թէ այս պատճառաւ անցած շաբթու շենք կրցած թերթը հրապարակ հանել: Թո՛ղ վստահելի անձնաւորութիւններէ Յանձնախումբ մը կազմուի և մենք պատրաստ ենք սոյն Յանձնախմբին ներկայութեան մեր դրամարկը բանալ և հաստատել թէ որքա՞ն դատարկ է այն (1):

Բարեբախտաբար շատ քիչեր հաւատք ընծայեցին նաև հրապարակ նետուած այն լուրին, որուն համեմատ իբր թէ Գահիրէի հայ մամուլը չկրնալով տոկալ Ազատ Խօսքի մրցումին, յաջողած է խոշոր դումարի մը փոխարէն, անոր դադարումը ապահովելը Իրա՛ւ է որ վերջերս Գահիրէէն ծանօթ հայ անձնաւորութիւն մը մեզ մօտ գալով, կէս-պաշտօնապէս, այդպիսի բանակցութեան մը հիմերը դնելու փորձն ըրաւ, սակայն մենք առաջին քայլէն իսկ սրամտութեամբ յայ-

(1) Այսինքն՝ տարաձայնութիւնը. Ծ. Խ.

տարաբեցիներ միջնորդ պարտնին որ մենք բարեբախտաբար մեր Գահիրէի չպաշտօնակիցներէն տարբեր գաղափար մը ունինք, «հանրային բարոյական», «մամուլի գեր», «սկզբունք», «ժողովրդի շահերուն պաշտպան», «արդարութեան օխոյ՛հան» և այս կարգի բարիշ կարգ մը սնաբանութեանց մասին:

Սուտ է նաև որ գրելիք նիւթերը սպառած ըլլալով թերթը դադրեցնելու ստիպուած էինք:

Սխալ՝ թէ Պօղոս փաշայի վերադարձին պիտի սպասէինք Ազատ Խօսքը շարունակելու համար: Երեսփոխանական ժողով, Սահմանադրութեան գործադրութիւն տարբեր բաներ են, Ազատ Խօսք տարբեր բան. թո՛ղ գիտնայ հանրութիւնը և չխաբուի սուտ մաշգորէներէն:

Առասպել՝ նաև այն լուրը թէ քէօմիւրճի Պատուելին մեզի դէմ՝ դատի սպառնալիք ընելուն համար, դադրեցուցեր ենք թերթերնիս: Համակրելի Պատուելին իրեն դէմ գրած մեր յօդուածները, իր լեզուական մասնագիտութեան շնորհիւ, յաջողած է ի նպաստ իրեն թարգմանելու և յատկապէս եկած է մեզ բերանացի շնորհակալութիւն յայտնել:

Հայրենակիցներ՝

Այսպէս ուրեմն, ջրելէ յետո, հարկ եղած հականերկականներով, մեզ դէմ կուտակուած սուտ տարաձայնութեանց չեղջակոյտը, այժմ

վայրկեանը եկած կը համարինք բո՛ւն ձշմարտութիւնը մեր ընթերցողներուն ցոյց տալ մերկապարանոց, նոյնիսկ բոլորովին մերկ ցոյց պիտի տայինք ձշմարտութիւնը, եթէ չվախնայինք վիրատօրելէ մեր ընթերցողուհիներու ծանօթ Պարկեշտութիւնը:

Արդ, անցած երկուշաբթի, դեկտ. 17 (Ն. Տ.) ժամը Տին միջոցները, մեր Պատասխանատու Խմբագիրը (ի՞նչ հարկ կայ անունը տալ քանի որ մաքերնիս բէքլամ մը ընել չէ), ըստ իր սովորութեան, կը նստէր Սէնթ Քաթէրին-Քառմուզ թըրամվայը, վերադառնալու համար իր բնակարանը, որ ի Պապ Սիտրա:

Երբ թրամվայը կը հասնի Ապու Տարտար փողոցի վերի ծայրը, դառնալու համար դէպի Քօլօն Բոմբէ փողոցը, փոխանակ, ըստ սովորութեան, ընթացքը դանդաղեցնելու նոյն արագուպարտապօհանջ մը զինքը հալածէր: Արդ մեր պատասխանատու Խմբագիրը միշտ այդ ընթացքին դանդաղեցումէն օգուտ կը քաղէր գետին ցառքելու և դէպի Բրիմիէ Խըտիվ փողոցէն՝ բնակարանը երթալու համար. ուստի կարծելով որ թրանվայը պիտի մեղմէ իր վազըը, պատրաստ կեցած էր իր ամենօրեայ մարմնամարզը ընելու:

Բայց, աւա՛ղ, թրամվայը իր խօլական արագութիւնը կը շարունակէ, Խմբագիրը մէկ սա-

քը օգին մէջ, մարմինը գէպի գուրս հակած, թրանվայէն վար ցառքելու պատրաստուող մարգու մը խիստ բնական մէկ պատկերը կը մարմնաւորէ և առանց նկատելու որ թրանվայը իր գնացքը չմեղմեր, լուսդոյն գատի մը համար գործածուելիք յանդգնութեամբ մը, կը նետուի սալարկին վրայ:

Անխոհեմ գիւցաղնութիւն . . . (1):

Քարը՝ որուն վրայ առաջին անգամ ռաք կը գնէ Ազատ Խօսքի համակրելի խմբադիրը՝ թրջուած էր, կամ սանկ ըսենք՝ թաց է. ասիկա պատճառ մը կ'ըլլայ բողբոջին կորսնցնել տալու խմբագրին արդէն ծանրապէս վտանգուած հաւասարակշռութիւնը և երուանդ Օտեան, որովհետեւ նոյն ինքն էր, ինչպէս ա գէն ուշիմ ընթերցողը գուշակեց, երեսանկեալ կ'ըլլնայ սխալաբանութիւն վրայ:

Անձնապաշտպանութեան բնագոյր սակայն, անկման միջոցին, աջ բազուկը գէպի առաջ կարկառել կուտայ, որով մեր պատասխանատու խմբագրին անկման հետեանքները զգալապէս կը մեղմանան. միայն թէ աջ ափը ուժգին կերպով յատակաքարին կը դարձուի. և, անբացատրելի իրողութիւն, ճիշտ այդ յատակաքարին վրայ կը գտնուէր կաղնի մեծութեամբ մանրախիճ մը որ կը մխրճի ափին մէջ:

(1) Եւ մանաւանդ՝ անօգուտ:

Երուանդ Օտեան ոտք կելլէ եւ կ'երթայ  
րնակարան եւ ափին մէջ գոյսցած վէրքը պաղ  
ջրով լուալէ յետոյ լաթ մը կը կապէ շուրջը: Հե-  
տեեալ առտու կը դիմէ Տ. Թօքաթլեանի Փարոս  
դեղարանը (Պուլվար Ռամլէ) ուր հարկ եզած վի-  
րաբուժական դարմանները կ'ըլլան վիրաւոր ձեռ-  
քին: Տ. Թօքաթլեան մասնաւորապէս կը յանձ-  
նարարէ արկածեալին ձեռքը անշարժ պահել  
մէկ քանի օր, որպէսզի աղետաւոր հետեանք մը  
յտառջ չի գայ: Ու այսպէս Երուանդ Օտեանի  
գրիչը քանի մը օրուան համար կը դատապար-  
տուի գրչակալին վրայ, հորիզոնական դիրքի մէջ,  
պառկած մնալու:

Ահա՛ թէ ինչո՛ւ անցած շաբաթ Ազատ Խօսք  
լոյս չէ տեսած:

Հայրենակիցնե՛ր,

Ահաւասիկ իրողութիւնը, պարզ, մէկին, ան-  
սեթեւեթ. գրեթէ իր կմաղային վիճակին մէջ:

Եւ սակայն թո՛ղ ներուի մեզ քանի մը հար-  
ցում ընել «ուր ուր անկ» է:

Ա.~ Ինչպէս կ'ըլլայ որ թրամվայը որ ամէն  
տուն գիծը դարձած տեղը իր գնացքը կը դան-  
դաղեցնէր, նոյն իրիկուն գրեթէ աւելի արագ-  
ցուց իր վազքը:

Բ.~ Ինչպէ՞ս կ'ըլլայ որ այն քարը որուն վը-  
րայ ոտք նետեց մեր Խմբագիրը թրջած էր, ջը-  
րով կամ գուցէ ուրիշ լպրծուն հեղուկով մը:

Գ.- Ինչպէ՞ս կ'ըլլայ որ ճիշտ այդ քարին մօտերը կը գտնուէր կաղինի մեծութեամբ մանրախիճ մը, միակ մանրախիճը, ինչպէս յետոյ ըստուգեցինք, ամբողջ Բըրմիէ Խըտիվ փողոցին երկայնքը:

Այս հարցումները անշուշտ անխուսափելիօրէն չը ներկայանան նաև մեր ընթերցողներու մօրին:

Մենք չենք ուզեր թեթևօրէն ու է ամբաստանութիւն ընել, բայց կը հաւատանք թէ վերահաս Արդարութիւն ըսուած բուն մը կայ աշխարհիս մէջ:

Այսչափ:

Խմբագրութիւն  
ԱԶՆՏ ԽՕՍԻ:

ՅԻՇԱՏԱՎԱՐ ԱՆԷՍ ՔԱՂՈՒԱՄ ԷՁ ՄԸ

ԴԵՐԱՍԱՆ ԳԷՈՐԴ ՊԵՏՐՈՍԵԱՆԻ

ՄԱՀՈՒԱՆ ԱՌԹԻԻ

(Շար. 30րդ թիւէն)

Ա՛հ, ինչ օրեր էին մսկնման պատրաստութեան այդ օրերը, ի՞նչ տենդային օրեր: Վերջապէ՛ս պիտի աեսնէի երազներուս իրա՛յանութիւնը. կովկա՛ս պիտի երթայի, գերասուններու մէջ պիտի մտնէի, դերասան մալե՛ս պիտի լինէի անոնց մէջ:

Շո՛ւտ, շո՛ւտ անցապի՛րս... ա՛խ այդ պատրիարքա-  
տան գրագիրները, ա՛խ այդ կառավարութեան պաշ-  
տօնեանները, մահալլէին քէհհա՛ն, տունին տէրաէ՛րը...  
Այն ժամանակ աւելի գիտակցօրէն ըմբռնեցի թէ մարդ  
ինչպէս յեղափոխական մը կրլայ ...

Տեսնելով ձեռքերս ունեցած տրամագրելի գումա-  
րիս շուտափոյթ անհետացումը քանի որ ծնողացմէս  
գաղտնի գործելով, չպէտք էր յոյս դնէի նրանց կողմէ  
նիւթական օգնութեան մը - սկսել էի ունեցած գիր-  
քերս ու այլ իրեղեններս ծախծխել: Միամի՛տս, կար-  
ծում էի դրանց փոխարժէքով կարողանալ կշտացնել  
անոնց յաւիտենական անկուշտ ախորժակը ...

Կամքի ոյժի առաջ, սակայն, ամէն ինչ կընկճուի:  
Եւ այսպէս, ճամբորդութեան համար պէտք եղած պաա-  
րաստութեանց մեծագոյն մասը արդէն մի կերպ կար-  
գողրած, փութացի Պետրոսեանի մօտ իմանալու հա-  
մար թէ ո՞ր օրն էինք մեկնելու:

Ներս մտնելով, Պետրոսեանին այլափոխուած գտայ.  
Նա իւր սովորական բարեացակամ ժպիտը չունէր այլ  
ևս սառը, պաշտօնական դէմք մ'առած էր, զոր իմ լար-  
ուած նախազգացումս աւելի մահազոյժ կը զարձնէր:

-Ինչ՞ կայ, ասացէք շուտով, ինչո՞ւ էք այդպէս մը-  
ոայլ, ինչ՞ գէշ լուր ունիք հազորդելու:

-Այն որ ես չեմ կարող այլ ևս ձեզ հետս տանիլ:

-Ինչպէ՞ս:

-Այո՛, ձեր մեկնելուց յետոյ ես երկար մտածեցի ու  
գտնում եմ որ... վերջապէս կան զանազան հաղամանք-  
ներ... և յետոյ, այս վերջին օրերս... մի քանի դէպքեր...  
որոշ պատճառներ...

-Եղբօ՛րս տեսաք:

...

Ա՛հ այն, կասկած չկար: Երկու օր առաջ հասել էր նա Եգիպտոսէն (յետոյ իմացայ օր Սամսոնէն հօրմէս ստաւած յատուկ հեռացրի վրայ էր եկած) և իմանալով եղելութիւնը զիմած պէտք է լինէր Պետրոսեանին:

- Այո՛, այնպէս չէ՞, նա՛ է որ եկեր է ձեզ մօտ ձեզ համոզելու, և զուք համոզուե՛լ էք, զո՛ւք, արտիստ մը...

- Է՛հ, բարեկամ, արտիստ լինելը պատճառ մը չէ ոպեւ որութեամբ միայն գործ տեսնելու համար. պէտք է ստոնարիւն, շրջահայեաց, «պ ր ա կ ա տ ի կ» մարդ լինել այս աշխարհում:

Ա՛հ իրաւ որ գործի մարդ է եղեր այս մարդը, մտածեցի հիասթափումով ու սկամայ ատելութեամբ լեցուիլ սկսող նայուածքս իր վրայ յարելով: Կարծես կարգալով աչքերուս մէջ շարունակեց:

- Դէ՛հ այո, սիրելիս, և ձեր եզրայրը շատ իրաւացի է դատում: Դուք լաւ ընտանիքի գաւակ էք, հարուստ, զուք պէտք է նեցուկ ու մխիթարութիւն լինիք ձեր հօրը, որը այնքան յոյսեր է գրել ձեր վրայ աւելի ընդարձակելու և մեծ զարկ տալու համար իր գործերուն. ձեզ սպասում է փայլուն ու ապահով ապագայ: Իսկ այդ բոլոր զուք ուզում էք թողնել անորոշ ապագայի մը, անապահով, թախառախան, յուսախարութիւններով ու վշտերով անուրջներով ու հիւանդագին տենդերով լի կեանքի մը համար...

- Եւ այդ ասոզը զո՛ւք էք, պր. Պետրոսեան, զո՛ւք:

- Ես... կամ ձեր ծնողքը, ձեր կզբօր բերնով: Եւ ես իրաւունք չունիմ ուրիշ կերպ խօսելու ձեզ: Ես ինքըս էլ զաւայնիքի հայր եմ և շատ լաւ եմ ըմբռնում իմ ունեցած պարտականութեան և իմ վրայ դրուած պատասխանատուութեան ծանրութիւնը: Ես խօսք էի

տուել ձեր եղբորը, և ահա կատարեցի խօստուումս, ևս խօստացայ ինքս ինձ ոչ մի կերպ չի զիջանիլ ձեր աղաչանքներին ու ստիպումներին, տանելու համար ձեզ ինձ հետ և ահա յայտնում եմ այդ ձեզ վճռականապէս և խնդրում եմ ի զուր փորձեր ջանէք ինձ այդ որոշումիցս յետ դարձնելու համար:

Եւջերս կրակի նման այրում էին, սիրտս պայթելու աստիճան ուժգին կը բարախէր ու չորացած կոկորդիցս խօլ խլրախն մը միայն կելլէր: Պետրոսեան մի քանի բոպէ խոշոր քայլերով սենեակը շափչիկէ յետոյ գացած էր կրկին իր բազկաթոռին մէջ թաղուելու. ես կեցած տեղս քարայած մնացել էի: Չգիտեմ որքան ժամանակ մնացինք երկուսս էլ այդ դրութեան մէջ, Վերջապէս մեծ ճիգ մ'ընելով խզեցի ճնշող լուծիւնը:

-Լսեցէք պր. Պետրոսեան, ըսի, չեմ կարող ձեզ բացատրել այն խորին ցաւը զոր պատճառեցիք ինձ անշուշտ ականայ, և որուն համար իրաւունք չունիմ ձեզ մեղադրելու. թերեւ ճիշտ լինի ձեր համոզմունքը որ կատարած եղաք ձեր պարտականութիւնը, զաւակներ ունեցող հօր մը պարտականութիւնը, ինչպէս դուք կրէէք: Այս բոպէիս ևս զգացի թէ ինչպէս մինակ եմ, ուստի և կը մնայ ինձ միայնակ, ինքնազուլս գործելու ևս ուրեմն, գնացէք Թիֆլիս, ըսէք ձեր ընկերներուն որ ես պիտի հետևիմ ձեզ և որ այսուհետեւ իմ նշանաբանս պիտի լինին այս խօսքերս, «կամ ծովին վրան, կամ ծովին տակը»:

-Լսի՛ր բարեկամս, ըսաւ, դու դեռ շատ երիտասարդ ես, բայց ինչպէս տեսնում եմ կամբքդ ևռանդիդ շափ ուժով է. ճակատագիրդ, ինքը թող առաջնորդ լինի քեզ: Ես ստիպուած եմ շուտով մեկնելու Թիֆլիս, բայց

այն օրը որ, ամէն պատրաստութիւններդ տեսնելով որոշեա չոգե՞աւ նստիլ, պր. Տ... ի մօտ կը գտնես ճանապարհածախսի համար պէտք եղած գրամը:

Ա՛հ վերջապէ՛տ, վերջապէ՛ս խօսեց արտիստը, նա յայտնուեց, երևան եկաւ իր իս'յութեամբ. նա մտաշար որ պարտաւորութիւններ ունէր, Քն ազգը խօսեց իր մէջ, վերջապէ՛ս ...

ԱՐՄԵՆԵԱՆ  
(Շարունա՛ելի)



ՉԷՃԱՐՈՂ ԲԱԺ-ԱՆՈՐԴԵՆԵՐՈՒ ԴԷՄՔԵՐ (1)

Ա.

Տ. ՄԱՐՏԻԿ ՔԻՍԷՄՃԵԱՆ

(Ասասութ, Վերին Եգիպտոս)

Կարելի է ըսել որ այս պարօնը բաժնեգին չվճարելը իրեն մասնագիտութիւն ըրած է: Ո՛չ միայն մինչև այսօր չէ վճարած Ազատ Խօսքի բաժնեգինը, այլ նաև ասկէ առաջ կոկորդը անցուցած է թերթիկ օրաթերթին 28 թիւերուն փոխարժէքը, ինչպէս նաև Ազատ Բեմի առաջին տարուան բաժնեգինը: Մեր կողմէ բացուած քննութենէ մը իմացանք որ յիշեալ պարօնը պարտական է եղեր երկու տարուան Փարոսի բաժ-

(1) Ըսած էինք որ մինչև հիմակ իրենց պարօնը չվճարող Ազատ Խօսքի բաժանորդներուն տնօրէնները պիտի հրատարակենք: Այսօրուընէ կը սկսինք, հանդերձ համառօտ կենսագրականներով:

նկին մեր բարեկամ՝ Յ. Ալփիարի, չորս տարւան Փիւնիկի փոխարժէք առ Տ. Ս. Բիւրատ, 160 զր. ողջ Ազատ Բեմի արգի վարչութեան, 50 զր. ողջ Շիրակի անցեալ տնօրէններուն, 40 զր. ողջ Հորիզոնի խմբագրութեան, 280 զր. ողջ Արշալոյսին ու երկու տարեկան բաժնեդէն Լուսաբերի:

Բարեկամ մը որ մօտէն կը ճանչնայ Մարտիկ Քիսէմճեանը մեզ կը հաւաստէ թէ այդ ակրահոյակ պարտնը խարդախ անանկութեան մը հետեանօք բանտարկութիւն կրած է Սելանիկի մէջ և ութը տարի առաջ Եգիպտոս գալով ժամանակ մը մաքսանենդութեամբ պարապելէ ետքը, կեղծ ստորագրութեամբ ծանօթ ծխախոտի հայ վաճառականէ մը բաւական կարևոր գումար մը շտրթելով, Շամցի անբարոյական կնոջ մը հետ քանի մը տարի առաջ անյայտ ու թափառական պտտած է, յետին թշուառութեան մէջ ձգելով իր հարազատ կինը և չորս անչափահաս տղաքը, որոնք Աղբառախնամի նպաստովը զրկուած են կէլիպօլու, իրենց բուն քաղաքը:

Յաջորդաբար պիտի ներկայացնենք մեր Գահիրէի, գաւառներու և արտասահմանի պարտքերնին չվճարող բաժանորդները:

#### ԶԳԵՍՏԻ ՀՍՄՍԲ

Մանուցած էինք անցածները թէ Պօղոսեան վարժարանի ժրձան հոգաբարձութիւնը սրոյշած է աշակերտաց միօրինակ զգեստ շինել և միմի-

այն աղքատիկ ծնողաց աղոց ձրիաբար նուիրել  
տօնական օրերու առթիւ: Հանգանակութիւն մը  
բացուած էր ասոր համար յատուկ Յանձնախմբի  
մը ձեռամբ և առաջին անգամ յիսուն ոսկի հա-  
ւաքուած:

Ահաւասիկ նուիրատուներու երկրորդ ցու-  
յակ մը:

Մայէր և Ընկ.	400
Տ. Գ. Մէրհամէթեան	390
Տ. Պ. և Կ. Օհանեան եղբարք	200
Ոճ	197,5
Տ. Մօրուքեան և ընկ.	195
Տ. Գ. Իբէքեան	195
Տ. Բ. Օհանեան	100

Կը յուսանք որ այն բարեսէր ազգայինները  
որոնք մինչև հիմակ չեն մասնակցած սոյն հան-  
դանակութեան պիտի փութան ժամ առաջ ի-  
րենց նուէրը ընել, մանաւանդ որ տօնական օրե-  
րը արդէն մօտեցան:

Տ. Ե. Ժ. ՄԻՈՒԹԻՒՆ

Տիգրան Երկաթ Միութեան ևս հետևեալ նուէր-  
ները եղած են:

Տ. Լ. Մկրտիչեան	97,5
Տօբթ. Ս. Ժամկոչեան	97,5

Նոյնպէս Տ. Ե. Թուրշուճեան մէկ անգը. ոսկի նը-  
ւիրած է Միութեան Մննդի այցելութիւններէ զերծ  
մնալու համար:

### ԾԱՆՈՒՑՈՒՄ

Երիտասարդ մը պատրաստ է Ֆրանսերէնի, Հայերէնի, անգլիերէնի, տուարակալութեան եւ մաթէմատիկի մասնաւոր դասեր տալ, ինչպէս նաև այցելու գրագրի պաշտօն ստանձնել շատ դժհացուցիչ պայմաններով: Դիմել Ազատ Խօսքի խմբագրատանը:

### Ա. Զ. Դ

Աթթարին փողոցը թիւ 39 խանութին մէջ կը վաճառուին հետեւեալ ապրանքները, ամենաընտիր տեսակէն եւ դժհացուցիչ գիներով:

Ձէյթին եաղ, սապոն, ճերմակ պանիր, Կովկասի հոչակաւոր սև խավեարը ինչպէս նաև Կովկասեան եւ հայկական Իշխան եւ Շամայի ձուկերը, նոյնպէս Եէմէնի խահուէ եւ այլ նպարիղէնք:

Ս Ե Ծ Ա Շ Մ Ա Տ Ա Ն Ո Յ  
ՕՐԱԳՐԱՆԱԸ ԵՒ ՏՈՒՐԱՆԱԸ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆ  
Ք. Յ Ա Ջ Ա Բ Է Թ Ի Մ Ն Ա Յ  
L'UNION  
"L'Union et le Travail" (Կարգիցն, եւ, եւ)  
15 RUE STAMBOUL IS ALEXANDRIE

Այս ախտանոցին մէջ կը գործառուին Ֆրանսիայի եւ Երկրի գոտի կողմէն: Բաւալի, Գլխիկ, Պարսկական կերպեր, արձա՛ն եւ սպիտակ մանուշակներ, թուփեր, ևն: Զինկուր-Ֆիլի եւ Կովկասեան թիւ կերպերու գործեր:

Տարածուած ամեն տեսակ գործեր կա եւ ասոր Կարճիկ, Կարճիկեան քրտնապիտեր, այլապարտեր, ճանապարհներ, աստղապիտեր, աստղապարտեր, մանուշակներ, աստղապիտեր, գլխիկներ ևն: Բաւալի կերպեր, արձա՛ն եւ սպիտակ մանուշակներ, թուփեր, ևն: Զինկուր-Ֆիլի եւ Կովկասեան թիւ կերպերու գործեր:

Այս ախտանոցը ներառել կը յանձնարարեն Անգլո-սարգիս, Գալիլի եւ բոլոր եզրագոտու ազգայնաց, զբաղեցնելով թէ եւս կամ բոլոր յանձնարարութիւնները ամենամեծ խնամքով կը կատարուին եւ զո՛ր կը եղն ամեն զեւարտան ճշտութեամբ:


Շատ քարձատուներու զիմէլ ասոյ՛ խանցիկ անգամ մը այցելել ասի ախտանոցը:

«Ա.Ջ.Ա.Տ ԽՕՄԻ» ՁԵՌՔԻ  
ԿԸ ՎԱՃԱՌՈՒԻ

Ալեքսանդրիա՝ Տ. Յ. Ղազիկեանի քով եւ Շէրիֆ Փաշա լրագրավաճառ Տ. Թեղալեանի խանութը:

Գահիրէ՛ լրագրավաճառ Տ. Հունկի եւ Կօլտրն Բէօշքի քով եւ «Առուարի» թերթի ցրուիչին մօտ:

Նախորդ շարթուան թիւերը կը վաճառուին կրկին գինով:



"ԱՐԱՏ ԽՕՄԲ" ի Պարսկաները

ԱՐԱՏ ԽՕՄԲ - 40 ՀՈՍՏԱՐԱՎՈՒՄ ԵՄԲՈՒ ՕՔԵՐԸ  
Եզիպոսի համար բաժնիկ. 100.1.

40 ԲԻՒՐ 40 ՂՐԵ ՈՂ.Ձ  
20 " 20 " "

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

ԵՐՐՈՒԱ 40 ԲԻՒ 10 ՏՈՒՐ  
ԲՈՒՍԻ " " 4 ՐՈՒՄԼԻ  
ԱՄԵՐԻԱ " " 2 ՏՈՒՐ

Բաժանորդագրությունը կանխիկ  
ՀԱՏԸ 1 ՂՐԵ ՈՂ.Ձ

"ԱՐԱՏ ԽՕՄԲ" ի համար բաժնեկիև կամ  
որ և է գրավիան պետք է ուղղել Տե-  
տևեանց հասցեին՝

K. Nazarethian

Rue Stamboul

ALEXANDRIE. (EGYPTE)

Մանրագրություններ կրեցուցիև խառնուր  
պայմաններով.

Գրաստիանառու խորագիր է ՕՏԵԱՆ

Տպագր. Փոքր Կ. ՆԱԶԱՐԵԹԻԱՆԻ ԱՍԿԱՆԻՅԻՄ